



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀՈՎԱՆԱԴՈՐԷ Ս. ԳՐՈՑ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՏՕՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 4 Մայիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հովանաւորէ Հոգեգալստեան տօնին նուիրուած տօնակատարութիւնը, որ տեղի պիտի ունենայ Ս. Պատարագի աւարտին, Էնսինոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ «Տիգրանեան» սրահին մէջ:

Այս ձեռնարկը նախաձեռնութիւնն է Ս. Գրոց Սերտողութեան խմբակներուն, եւ կազմակերպուած է Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւին ու հոգաբարձութեան կողմէ: Կոկիկ յայտագիր մը կազմուած է. շարականներ պիտի երգուին, Ս. Գրային ընթերցումներ պիտի կատարուին եւ իւրաքանչիւր շրջանի ներկայացուցիչ պիտի փոխանցէ իր խօսքը:

PRELATE TO PRESIDE OVER CELEBRATION OF PENTECOST

By the initiative of Bible study groups from various parishes, an event dedicated to the feast of Pentecost will take place on Sunday, May 4th, at "Dikranian" Hall of Holy Martyrs Church in Encino.

The event is being held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and has been organized by the Pastor and Board of Trustees of Holy Martyrs Church.

The event will feature hymns, Bible readings, and remarks from representatives of each area.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ՀՕՄ-Ի ՓԱՌԱՏՕՆԻՆ ԲԱՅՈՒՄԸ

Շաբաթ, Մայիս 3-ին, կ.ե. ժամը 2-ին, Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ՀՕՄ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած տարեկան 7-րդ փառատօնին եւ պիտի փոխանցէ իր օրհնութեան խօսքն ու աղօթքը:

Երկօրեայ փառատօնը տեղի պիտի ունենայ Կլենտլի Civic Auditorium-ի մէջ եւ պիտի շարունակուի Կիրակի, մինչեւ երեկոյեան ժամը 7-ը:

PRELATE TO DELIVER INVOCATION AT THE OPENING OF THE ARS FESTIVAL

The 7th annual Armenian Relief Society festival, organized by the ARS Regional Executive, is scheduled to take place on Saturday May 3rd and Sunday May 4th at the Glendale Civic Auditorium.

The Prelate will deliver the invocation and convey his remarks during the opening ceremony on Saturday.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՍԱՒՈՐ ԱՐԹԻՐ ԱՂԱԲԷԿԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Ուրբաթ, 2 Մայիսի առաւօտուն, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Հայաստանի Ազգային Ժողովի անդամ եւ Ազգ. Անվտանգութեան ու Պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Արթիւր Աղաբէկեանի այցելութիւնը: Հայրենի հիւրը Լոս Անճելըս կը գտնուի Արցախեան Պայքարի 20ամեակին նուիրուած տօնակատարութեան բանախօսելու համար:



Պատգամաւորի կ'ընկերանար Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Նահանգներու Կեդր. Կոմիտէի անդամներէն Տիար Գարեգին Խանճեան: Ներկայ էին Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ Ազգային Վարչութեան գանձապահ Տիար Վահան Պզտիկեան:

Առաջնորդ Արքազանը հայրենի հիւրը ողջունեց, նշելով, որ «Ազգ. Առաջնորդարանը կը հանդիսանայ իւրաքանչիւր հայու տունը»: Հայրենի հիւրին հետ զրոյցը ընդգրկեց Հայաստանի ու Արցախի իրադարձութիւնները, ինչպէս նաեւ մեր գաղութին իրավիճակին կապուած հարցեր: Ա. Աղաբէկեան փոխանցեց իր քաղած լաւ տպաւորութիւնները՝ Ազգային Վարժարաններ իր այցելութիւններէն ու նոր սերունդին մատուցուած հայեցի դաստիարակութենէն, ընդգծելով, որ «կարելորդ այն է թէ հայը իբրեւ հայ արթննայ ամէն առաւօտ, ուր որ ալ գտնուի ան»:

Այնուհետեւ, խօսակցութիւնը զարգացաւ Հայաստանի վերջին իրադարձութեանց ու անոր հետեւանքներուն վրայ. հիւր պատգամաւորը ընդգծեց իշխանութիւններուն ու ժողովուրդին գործակցութեան անհրաժեշտ

հրամայականը: Ան այս առիթով նաեւ խօսեցաւ կարգ մը հայրենաշէն ծրագիրներու մասին:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը հայրենի պատգամաւորին յանձնեց յուշանուէր մը:

ARMENIAN PARLIAMENT MEMBER ARTUR AGHABEGIAN VISITS THE PRELACY

On the morning of Friday, May 2nd, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy member of Armenia's Parliament and Chair of the Security and Defense Committee Artur Aghabegian, who was invited to Los Angeles to be the keynote speaker at the 20th anniversary grand celebration of the Artsakh Liberation Movement.



Participating in the meeting were ARF Central Committee representative Mr. Karo Khanjian, Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian and Executive Council treasurer Mr. Vahan Bezdikian.

The Prelate and guests discussed the current state of affairs in Armenia and Artsakh as well as issues relating to our community in general. Mr. Aghabegian imparted that during his visits to Prelacy schools he was impressed by the Armenian education the students were receiving, emphasizing that what is important is for an Armenian to rise each day as an Armenian no matter where he finds himself in this world.

The discussion then turned to the situation in Armenia, with Mr. Aghabegian noting that cooperation between the governing bodies and the people is crucial. He also spoke of the various efforts to secure aid for Armenia.

The visit concluded with the Prelate presenting the guest deputy with a memento.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԱՐՅԱԽԵԱՆ ՊԱՅՔԱՐԻ 20-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Արցախի Ազատագրական Շարժումին 20-ամեակի հանդիսաւոր տօնակատարութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, Մայիս 2-ի երեկոյեան, Լոս Անճելըսի Wilshire Ebell սրահին մէջ:

Տօնակատարութիւնը կազմակերպուած է Արցախի 20-ամեակին նուիրած ձեռնարկները համադրող յանձնախումբին կողմէ: Օրուան բանախօսն է Հայաստանի Հանրապետութեան Ազգ. Ժողովի պատգամաւոր

Արթուր Աղաբեկեան, որ յատկապէս հրաւիրուած էր Հայաստանէն: Առաջնորդ Սրբազանը պիտի ընդառաջէ հրաւերին: Ներկայ պիտի ըլլան նաեւ միաբան հայրերն ու Թեմիս հոգեւորականաց դասու անդամներ:

PRELATE TO ATTEND GALA CELEBRATION OF THE 20TH ANNIVERSARY OF THE ARTSAKH LIBERATION MOVEMENT

On the evening of Friday, May 2nd, the gala celebration of the 20th anniversary of the Artsakh Liberation Movement will take place at the Wilshire Ebell Theatre. The event is organized by the Glendale, Burbank, and La Crescenta communities.

The keynote speaker of the event is Artur Aghabegian, member of Armenia's Parliament and Chair of the Security and Defense Committee, who was invited from Armenia for this event.

The Prelate, accompanied by clergy members, will attend the celebration.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՄԱՆԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հինգշաբթի, Մայիս 1-ին, Համբարձման տօնին առիթով, առաւօտեան ժամը 10-ին, Ս. Պատարագ մատուցուեցաւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր: Ս. Պատարագը մատուցեց Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Քհնյ. Խաչատուրեան: Օրուան խորհուրդը ներկայացնող պատգամը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Պատարագէն վերջ, ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ Կլենտէյլի First Congregational եկեղեցւոյ սրահին մէջ: Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը վայելող Համբարձման այս ձեռնարկը կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ, եւ հիւրընկալութիւնը ստանձնած էր Տիկին Անյոյ Մարթայեան: Բարի գալուստի խօսք արտասանեց Տիկնանց Միութեան անդամ եւ հանդիսավար Տիկին Հռիփկ Ապտուլեան, որ ձեռնհասօրէն կատարեց իր պարտականութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրհնութիւնը եւ շնորհաւորեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կազմակերպած այս յաջողութիւնը: Չնահատեց տիկին Մարթայեանի սիրայօժար հիւրընկալութիւնը եւ փոխանցեց իր բարեմաղթութիւնները: Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան բացատրեց Համբարձման տօնին խորհուրդը: Գեղարուեստական յայտագրի բաժինով ելոյթ ունեցաւ երգիչ Գագիկ Պատալեան: Ապա, տեղի ունեցաւ աւադական վիճակաձգութիւն:

PRELATE PRESIDES OVER DIVINE LITURGY AND LUNCHEON ON THE FEAST OF ASCENSION

The Feast of Ascension was celebrated on Thursday, May 1st, beginning in the morning with Divine Liturgy, followed by the traditional luncheon. The Prelate presided over Divine Liturgy, which was celebrated by Holy Martyrs Church Pastor Rev. Fr. Razmig Khatchadourian, at St. Mary's Church in Glendale, and delivered the sermon.

The luncheon took place following Divine Liturgy at the First Congregational Church in Glendale. The Prelate presided over the luncheon which was organized by the Prelacy Ladies Auxiliary and hosted by Mrs. Anoush Martayan.

Following welcoming remarks by Master of Ceremonies Mrs. Hourig Abdulian, the Prelate delivered the invocation and conveyed his blessings. He commended the Ladies Auxiliary for once again organizing a successful event and thanked Mrs. Martayan for hosting the luncheon. Rev. Fr. Vazken Atmajian then elaborated on the feast and the traditions associated with it, after which the festivities continued with the traditional *vijag* and entertainment by singer Gagik Badalyan.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՓՐՈՖ. ՎԵՐԺԻՆ ՍՎԱՉԼԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի, 29 Ապրիլի կեսօրին, Ազգային Առաջնորդարան այցելեց հայրենի մտաւորական Փրոֆ. Վերժին Սվազլեան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Հայրենի հիւրին կ'ընկերանային Փրոֆ. Ռուբինա Փիրումեան եւ Արարատ-Էսքիճեան թանգարանի փոխ տնօրէնուհի Տիկին Մակի Մանկասարեան: Հանդիպումին մասնակից եղաւ Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հայրենի հիւրը եւ դրուատիքով արտայայտուեցաւ անոր երախտաշատ աշխատանքին մասին: Ծանօթ է, որ Փրոֆ. Վ. Սվազլեան ընդարձակ աշխատանք տարած է մեր մշակոյթի պահպանման կալուածին մէջ, յատկապէս Յեղասպանութենէն վերապրողներու հետ իր ուսումնասիրութեանց ճամբով, կորուստէ փրկելով աւանդներ ու բանահիւսութիւն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց հիւրերուն:



PROFESSOR VERJINE SVAZLIAN VISITS THE PRELACY

On Tuesday, April 29th, historian Professor Dr. Verjine Svazlian visited the Western Prelacy where she was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Executive Council Chairman Dr. Garo Agopian. Professor Svazlian was accompanied by Dr. Rubina Peroomian and Vice-Chairwoman of the Ararat-Eskijian Museum Mrs. Maggie Mangassarian.

The Prelate highly commended Professor Svazlian for her dedication to preserving the history and culture of the Armenian people, most notably her tireless efforts in collecting and documenting testimonies of Genocide survivors and in doing so ensuring that our past is not forgotten. At the conclusion of the visit the Prelate presented the guests with mementos.

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 36-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅԻՍ 9-ԻՆ ԵՒ 10-ԻՆ

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 36-րդ նստաշրջանը պիտի գումարուի Ուրբաթ, Մայիս 9-ին եւ Շաբաթ, Մայիս 10-ին, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ, հիւրընկալութեամբ եկեղեցւոյ հոգաբարձութեան:

Օրակարգի վրայ եւ մեր եկեղեցիներու, վարժարաններու եւ առհասարակ ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ տարուող աշխատանքներուն քննարկումը: Տեղի պիտի ունենայ նաեւ Առաջնորդի, Կրօնական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան ընտրութիւն:

Ազգային Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, եւ նոյն աշխատանքներու ծիրին մէջ, Չորեքշաբթի, 7 Մայիսին Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Թեմիս հոգեւորականաց համագումարը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր. ծրագիրը պիտի ընդգրկէ առաւօտեան ժամերգութիւն, հոգեւոր խորհրդածութիւն եւ դասախօսութիւն:

Համագումարը պիտի բանաձեւէ առաջարկներ եւ ծրագիրներ, որոնք պիտի ներկայացուին Ազգային Երեսփոխանական Ժողովի 36-րդ նստաշրջանին:

36TH PRELACY REPRESENTATIVE ASSEMBLY

The 36th Prelacy Representative Assembly will convene on Friday, May 9th, and continue on Saturday, May 10th, at “Armenag Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. The parish Board of Trustees will host the assembly.

Items on the agenda include the assessment of the previous year’s activities of our churches and schools as well as the election of the Prelate, the Religious and Executive Councils.

On Wednesday, May 7th, the Prelate will preside over a clergy conference in the same hall, during which issues relating to the Representative Assembly will be discussed and suggestions made to present at the meeting.